իւր այս անկեղծ բարեսիրութեան զգացմունքն եւ խնդութիւնը. նորա դարբիններն անդադար ծեծում են իրենց սալերը, մինչեւ անգամ քրիստոնէութեան ժամանակ կիրակի օրերն եւս, որպէս զի Արտաւազդի շղթաներն ամրանան եւ չկարողանայ ազատուիլ ու գալ աշխարհը խռովելու . . . .

(Կ-ր-Ն-ՍՍ).

Կ. Կ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։

— Սուրճը իբրեւ ծխելու (օդ մաքրող) միջոց։ Երեւի մեր ընթերցողներին յայտնի չէ, որ բոված սուրճը օդը մաքրող գեղեցիկ միջոց է եւ շուտ կոչնչացնէ կենդանական թէ բուսական նեխութեան հոտը։ Փորձը դժուար չէ անել։ Երկար ժամանակ իւր մէջ բոլորովին հոտած միս պարունակող տակառը բոլորովին կաղատվի վատ հոտից, եթէ նորան բռնած պահեն մի գրվանքայ նոր բոված կամ առաւել լաւ է, այրված սուրճի վերա։ Արտաքնոցներ մաքրելու ժամին տարածված գարշահոտութիւնը շուտ կոչնչանայ, եթէ ծխենք սենեակների մէջ այրված սուրճ։ Եթէ սպանած թռչուններին շաղ տան այրած սուրճ, շատ երկար ժամանակ կպահպանվի նոցա թարմութիւնը եւ մինչեւ անգամ կարելի է ուղարկել նոցա այս կերպով շատ հեռաւոր երկիրներ։ Այրված սուրճ ծխելն շատ օգտաւէտ է հիւանդանոցների մէջ։ Վարակիչ հիւանդութիւնների միջոցին սուրճը նախամեծարելի է քան թէ խլորը (հանք) եւ կաբբոլեան թթուածը, որովհետեւ սուրճը կներգործէ անհամեմատ առաւել շուտ եւ ոյժով քան թէ խլորը եւ կաբբոլեան թթուածը։

— Պէտէրբուրգի լրագրի մի մէջ պ. Վիսկովատով կծանուցանէ բրոմի (հանք) զարմանալի ներգործութիւն, մանաւանդ բարակացաւով հիւանդների վերա։ Պ. Վիսկովատովը կպատմէ թէ նորա կինը չարաչար կտանջվէր միզրէն կոչված գլխացաւով (գլխի մի մասում) եւ երկարատեւ յօդացաւով ամբողջ մարմնի մէջ, ինքն եւս նոյնպէս, եւ բացի սորանից հնացած թոքախտով (phthysis tuberculosa). իսկ այժմ նորա երկուքն եւս բոլորովին առողջութիւն գտած են բրոմի գործածութեամբ ներքուստ Մաքսիմիլիանեան բժշկանոցի դոկտոր պ. Լանդսբէրգի պատուէրի համեմատ յետագայ ձեւով. Rp. Bromatis Calicis drachma js, Aquae destillatae unz vj, Saccari albi drachma iij.—M. Ds. — Ընդունելու է օրը երեք անգամ մի մի հացի դդ։ Բրոմի զարմանալի բուժիչ ներգործութիւնը այս հիւանդութիւնների մէջ կարող փորձել իւրաքանչիւր հիւանդն ինքն իւր վերա։

— Ռուսական վանքերի «անհամար» դանձերի մասին խօսելով, «Ռուսական Աշխարհ» օրագիրը հետաքրքիր տեղեկութիւններ կներկայացնէ Պէտէրբուրգի Նէվա-

կան Վեստնիկի վիճակագրութեամբ. «Պէտէրբուրգեան վանքը յիսնասներորդ Թուերից յետոյ կարողացաւ շինել բաւականից աւելի հացի խանուԹներ 20 – 30 սաժէն երկայնուԹեամբ. բացի սորանից նա շինած է երկու ընդարձակ շէնքեր, որոնց մէջ 70ից աւելի մարմններ կգտնվին. եօԹանասներորդ Թուերում վանքը շինեց դարձեալ քանի մի ահագին շինուԹիւններ, որոնցից 12 տների մի երեսին միայն ուԹհարիւր լուսամուտից աւելի կհամարվի: Պէտէրբուրգի վանքի բոլոր տարեկան եկամուտը Պետերբուրգի մէջ եղած տներից եւ հողերից զուտ 200 հազար մանէԹից աւելի է: ԵԹէ աւելացնենք սորան ուխտաւորների եկամուտը, նուէրներ, զոհաբերուԹիւններ, կտակներ եւ այլ եւ այլ յանձնած մանէԹներ պատկերների առաջ մոմ վառելու համար, կտակներ գանձանակի համար, մաղԹանքների համար, նշխարների համար, ձէԹի համար, զանազան պատկերների համար, զօտիների, մասունքի, խաչերի համար եւ այլն, եւ այլն, այն ժամանակ վանքի եկամուտը շատ եւ շատ նշանաւոր գումար կկազմէ: Աւելացնենք սորան դարձեալ այն եկամուտը, որ ունի վանքը գերեզմանատնից, որի գերեզմանական տեղերը կվաճառվին 300 մ., 200 մ., 100 մ. եւ այլն: «Ռուսական Աշխարհի» հաշուով կերեւի, որ ռուսական վանքերի տարեկան եկամուտը, 5 միլիոն մանէԹի հաշուելով, աւելի է քան Թէ քանի մի եվրոպական տէրուԹիւնների եկամուտքը»:

— Յայտնի է, որ Թուղթը վաղուց դարձած է փոքր ի շատէ քաղաքակրթուած իւրաքանչիւր ազգի օրական գործածուԹեան առարկաներից մին, եւ իւրաքանչիւր տէրուԹեան գործածված Թղթի քանակուԹիւնը կարող է ճշգրտոյն չափ լինել նոյն տէրուԹեան մտաւորական զարգացման աստիճանը գնահատելու համար:

Եվրոպան կծախսէ ամեն տարի աւելի քան 41 միլիոն 200 հազար փութ զանազան տեսակ Թուղթ: Ի նկատի առնելով Եվրոպայի 316 միլիոն բնակիչ, իւրաքանչիւր հոգուն կընկնէ տարեկան 5½ գրվանքայ Թուղթ: Ամերիկան կգործածէ 15 միլիոն 10 հազար փութ, կամ մօտ 14 գրվանքայ իւրաքանչիւր հոգուն: Իսկ աշխարհի միւս բոլոր մասերը հազար եօԹն միլիոն հոգի բնակիչներով 1 միլիոն փութից աւելի Թուղթ չեն գործածում, որ հազիւ 0,04 գրվանքայ (մօտ 4 մսխալ) կանկէ իւրաքանչիւրին: Ուրեմն երկրագունդի բնակիչների մեծ մասը գրեԹէ ամենեւին կարօտուԹիւն չէ զգում Թղթի, մտաւորական զարգացման ամենաստոր աստիճանի վերայ գտնվելով:

Վերոյիշված Թուից լրագրական Թուղթը կգործածվի 28 միլիոն փութ, փաթաթելու Թուղթը 12½ միլիոն փութ, գրելի Թուղթը 9½ միլիոն փութ, մնացած 5 միլիոնը զանազան տեսակ Թղթեր:

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Յունվարի 1ին Մայր Աթոռիս միաբանուԹեան ներկայանալուց եւ Նոր տարի շնորհաւորելուց յետոյ Վեհափառ Հայրապետին, բազմ. ունեցան ներկայանալու իւրեանց Վեհափառ եւ